



**«ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԻՍՏՆԵՐԻ
ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՀԿ (ՀՖՄ)
2015-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

Երևան 2015

Բովանդակություն

Ռազմավարական ծրագրի նպատակը.....	3
I. ՀՖՄ առաքելությունը, շրջակա միջավայրի վերլուծությունը և գնահատումը.....	3
ՀՖՄ առաքելությունը.....	3
ՀՖՄ շրջակա միջավայրի վերլուծությունը և հիմնախնդիրների բացահայտումը.....	3
II. ՀՖՄ տեսլականը, արժեքները, սկզբունքները և ռազմավարական նպատակները.....	6
2.1. ՀՖՄ տեսլականը	6
2.2. ՀՖՄ հիմնարար արժեքները և սկզբունքները	6
2.3. ՀՖՄ ռազմավարական նպատակները.....	7
III. ՀՖՄ գործունեության հիմնական ուղղությունները	9
3.1. ՀՖՄ մասնագիտական գործունեություն տեղական ինքնակառավարման բնագավառում	9
Մասնակցություն ՀՀ օրենսդրության մշակմանը և քննարկմանը.....	9
Պետական կառավարման մարմինների հետ համագործակցություն.....	9
Համայնքների հետ տարվող աշխատանք.....	9
Խորհրդատվական և հետազոտական գործունեություն	10
Հանրային կապերի ստեղծում և ամրապնդում	10
Շահերի պաշտպանություն.....	10
Ոսուցողական ծրագրերի իրականացում	10
Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ համագործակցության զարգացում.....	11
3.2. ՀՖՄ ներքին կանոնակարգային գործունեության ուղղությունները	11
Վարչական կառավարում	11
Կադրային քաղաքականության իրականացում.....	11
Կազմակերպության անդամների հետ տարվող աշխատանք.....	12
Ֆինանսական կառավարում	12
IV. Ռազմավարական ծրագրի մշտադիտարկում, գնահատում և վերանայում	13

Ռազմավարական ծրագրի նպատակը

ՀՖՄ 2015-2020թթ. ռազմավարական ծրագրի նպատակն է՝ կազմակերպության ներքին ու արտաքին իրավիճակների վերլուծության և գնահատման արդյունքում բացահայտված հիմնախնդիրների լուծման համար երկարաժամկետ ժամանակահատվածում ռազմավարական նպատակների առաջադրումը, զարգացման ուղղությունների սահմանումը և իրականացումը:

Ռազմավարական ծրագիրը գործնական առումով հիմք է հանդիսանալու ՀՖՄ առաջիկա վեց տարիների գործունեության նպատակային պլանավորման և, ըստ այդմ, ձեռքբերվող ռեսուրսների հասցեական բաշխման և վերաբաշխման համար:

Ռազմավարական ծրագիրը նաև կոչված է՝ կանխարգելելու արտաքին գործոնների բացասական ազդեցությունը կազմակերպության վրա՝ ապահովելով ՀՖՄ գործունեության նպատակաուղղվածությունը, առաջնահերթությունները ու հետևողականությունը:

I. ՀՖՄ առաքելությունը, շրջակա միջավայրի վերլուծությունը և գնահատումը

ՀՖՄ առաքելությունը

ՀՖՄ առաքելությունն է՝ իր մասնագիտական գործունեությամբ նպաստել ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի ամրապնդմանն ու զարգացմանը՝ վեր հանելով բնագավառում առկա հիմնախնդիրներն ու մարտահրավերները և մասնակցելով, մի կողմից, համայնքների ֆինանսական կառավարման բնագավառի զարգացման քաղաքականությունների, օրենսդրական կարգավարումների և մեթոդաբանական գործիքների մշակմանը, նրանց համապատասխանեցմանը ժամանակակից մեթոդներին ու միջազգային չափանիշներին և, մյուս կողմից, հետամուտ լինելով համայնքների ֆինանսական կառավարման բնագավառում առկա քաղաքականությունների, օրենսդրական պահանջների և հայեցակարգային մոտեցումների կիրառմանը և գործնականում իրագործմանը, համայնքների ֆինանսական ծառայությունների հզորացմանը և ֆինանսական ծառայողների դերի բարձրացմանը:

ՀՖՄ շրջակա միջավայրի վերլուծությունը և հիմնախնդիրների բացահայտումը

ՀՖՄ-ն՝ կոչված լինելով մասնագիտական գործունեություն իրականացնել տեղական ինքնակառավարման բնագավառում, գտնվում է արտաքին և ներքին գործոններով պայմանավորված այնպիսի միջավայրում, որտեղ առկա են լուծման ենթակա տարբեր հիմնախնդիրներ ու մարտահրավերներ: Ելնելով դրանց լուծման անհրաժեշտությունից՝ կազմակերպությունը նախանշում է իր գործունեության հիմնական ուղղություններն ու առաջնահերթությունները: Կազմակերպությունն՝ իր առաքելությունը կյանքի կոչելու համար, պետք է պարբերաբար վերլուծի և գնահատի անընդհատ փոփոխվող շրջակա միջավայրի ընձեռած

հնարավորությունները և ստեղծած խոչընդոտները: Ներկա պահին շրջակա միջավայրի իրավիճակի գնահատումը իրականացվել է կազմակերպության ուժեղ և թույլ կողմերի (ներքին գործոնների), հնարավորությունների և սպառնացող վտանգների (արտաքին գործոնների) վերլուծության միջոցով (ՈԻԹՀՎ վերլուծություն):

ՀՖՄ ՈԻԹՀՎ վերլուծություն

Ներքին գործոններ

Ուժեղ կողմերը
Կազմակերպության անդամների արհեստավարժությունը (պրոֆեսիոնալիզմը)
Հեղինակությունը և ճանաչումը ՀՀ համայնքներում, պետական կառավարման մարմիններում, միջազգային կազմակերպություններում, գործընկեր կազմակերպություններում
Հետազոտական, վերլուծական աշխատանքների իրականացման կուտակված որոշակի փորձը
Տեղական ինքնակառավարման բնագավառում մեծաթիվ հրապարակումների և հրատարակությունների առկայությունը
Օրենսդրական ակտերի, ռազմավարական ու հայեցակարգային փաստաթղթերի, մեթոդաբանությունների, կարգերի, մեթոդական և խորհրդատվական ուղեցույցների մշակման նշանակալի փորձը
Համայնքներում մասնագիտական գիտելիքների և հմտությունների ներդրման և փոխանցման ազդեցիկ փորձը
Ուսուցողական ծրագրերի իրականացման ուսանելի փորձը
Շահերի պաշտպանության բնագավառում որոշակի փորձը
Կառավարման թափանցիկությունը և հաշվետվողականությունը
Աշխատակազմի մասնագիտական կարողությունների և հմտությունների բարելավման ուղղությամբ տարվող հետևողական աշխատանքները
Թույլ կողմերը
Կազմակերպության սեփական գրասենյակի բացակայությունը
Ֆինանսական հոսքերի անկայունությունը, դոնոր կազմակերպություններից խիստ կախվածությունը, ֆինանսական անկախության ցածր մակարդակը
Կազմակերպության անդամների թույլ ներգրավվածությունը, հոսունությունը և կազմակերպության գործունեության նկատմամբ նրանց հետաքրքրվածության աստիճանական նվազումը
Անդամավճարների հավաքագրելիության ցածր մակարդակը
Կազմակերպության աշխատանքներում կամավորների ներգրավման տարերային վիճակը
Վարչության և վերստուգիչ հանձնաժողովի գործունեության նկատելի պասիվությունը
Հեռավոր համայնքներից կազմակերպության անդամների ներգրավման ցածր հնարավորությունները
ԶԼՄ-ների հետ բավարար աշխատանքի պակասը, կազմակերպության հանրությանը ներկայացածվածության դեռևս ոչ ցանկալի մակարդակը

Արտաքին գործունեք

Հնարավորություններ	
	Տեղական ինքնակառավարման համակարգում սպասվող բարեփոխումները նոր հնարավորություններ կստեղծեն կազմակերպության զարգացման համար
	Համայնքների, պետական կառավարման մարմինների, ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում գործունեություն ծավալող միջազգային և տեղական կազմակերպությունների և շահագրգիռ այլ կողմերի շրջանում կազմակերպության բավականաչափ ճանաչված լինելը և նրանց հետ ձևավորված կապերը հնարավորություն են տալիս ընդլայնել գործընկերության և համագործակցության շրջանակները
	Տեղական ինքնակառավարման բնագավառում աշխատանքների կատարման տարիների ընթացքում կուտակված փորձը նոր հնարավորություններ են բացում կազմակերպության առջև
	<Հասարակական կազմակերպությունների մասին> ՀՀ նոր օրենքի նախագծի ընդունմամբ պայմանավորված՝ կառաջանան կազմակերպության գործունեության նոր ուղղություններ, որոնք մեծապես կնպաստեն կազմակերպության զարգացմանը
Մյառնացող վտանգներ	
	Համայնքներում, պետական կառավարման մարմիններում, դոնոր կազմակերպություններում ձևավորված կապերի թուլացում
	Տեղական ինքնակառավարման համակարգով հետաքրքրվող նոր սերնդի մասնագետների պակաս

ՈԻԹՀՎ վերլուծության հիման վրա ՀՖՄ բացահայտված հիմնախնդիրները պայմանականորեն խմբավորվել են երկու ուղղություններով՝

- 1) **ՀՖՄ գործունեությանն առնչվող՝ տեղական ինքնակառավարման բնագավառի համակարգային հիմնախնդիրներ.**
 - ✓ ՀՀ տեղական ինքնակառավարման բնագավառի օրենսդրական դաշտի թերություններ, բացթողումներ, կիրառման խնդիրներ,
 - ✓ ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի հիմնախնդիրների, զարգացման հրամայականների վերաբերյալ հստակ պատկերացումների պակաս, քաղաքականությունների հստակության և նախանշված բարեփոխումների իրականացման հետևողականության ոչ ցանկալի մակարդակ,
 - ✓ ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում կանոնակարգային և մեթոդաբանական գործիքակազմերի ոչ լիարժեք վիճակ, կառավարման ժամանակակից մեթոդների, կառուցակարգերի և միջազգային առաջավոր փորձի ներդրման պակաս,
 - ✓ ՏԻՄ-երի և համայնքների աշխատակազմերի աշխատակիցների թույլ կարողություններ և հմտություններ,
 - ✓ Տեղական ինքնակառավարման համակարգում փորձագետների, մասնագետների, հատկապես՝ նոր սերնդի, խիստ պակաս
 - ✓ Համայնքների օրինական շահերի պաշտպանության ինստիտուցիոնալ կառույցների պակաս,

- ✓ Տեղական ինքնակառավարման բնագավառում գործող քաղաքացիական հասարակության սուբյեկտների միջև գործընկերության և համագործակցության պակաս, նրանց գործունեության տարերայնություն և անկայունություն:

2) ՀՖՄ ներքին կանոնակարգային հիմնախնդիրներ.

- ✓ Կազմակերպության վարչական կառավարման համակարգերի արդիականացման և կանոնակարգման ոչ ցանկալի մակարդակ,
- ✓ Կազմակերպության աշխատակազմի մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականության, նոր աշխատակիցների ներգրավման և կամավորների ընդգրկման գործընթացների ոչ ցանկալի մակարդակ,
- ✓ Կազմակերպության ֆինանսական կառավարման համակարգերի արդիականացման կարիք,
- ✓ Ֆինանսական անկախության ցածր մակարդակ:

II. ՀՖՄ տեսլականը, արժեքները, սկզբունքները և ռազմավարական նպատակները

2.1. ՀՖՄ տեսլականը

Համայնքների ֆինանսիստների միավորումը ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի «մտքի» առանցքային կենտրոններից է՝ զինված գործունեության համար անհրաժեշտ ռեսուրսներով, տեղեկատվական և հաղորդակցության ժամանակակից համակարգերով, համալրված արհեստավարժ փորձագետներով ու մասնագետներով, և լայն ճանաչում ստացած Հայաստանում և արտերկրում: Կազմակերպությունը մասնագիտական բազմակողմանի քննարկումների ու երկխոսության մի հարթակ է տեղական ինքնակառավարման բնագավառում քաղաքականություն ձևավորող և իրականացնող պետական կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի սուբյեկտների համար՝ ի նպաստ ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի ամրապնդման և զարգացման:

2.2. ՀՖՄ հիմնարար արժեքները և սկզբունքները

ՀՖՄ-ն որդեգրում է հետևյալ հիմնարար արժեքները՝

- Արդարություն և ազնվություն
Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում հանդես է գալիս արդարության և ազնվության, բարոյա-էթիկական բարձր նորմերի ապահովման դիրքերից:
- Մասնագիտական կատարելություն և աշխատանքային բարձր որակ

Կազմակերպությունն անչափ կարևորում և արժևորում է իր անդամների և աշխատակազմում աշխատող փորձագետների ու մասնագետների արհեստավարժությունը (պրոֆեսիոնալիզմը) և նրանց կողմից իրականացվող աշխատանքների մասնագիտական բարձր որակը:

- **Հարգանք և հանդուրժողականություն**

Կազմակերպությունը դրսևորում է հարգանք և հանդուրժողականություն մարդկային և գործընկերային փոխհարաբերություններում, պաշտպանում է մարդու ազատությունը և իրավունքները, բազմակարծությունը և տեսակետների բազմազանությունը:

- **Խտրականության բացառում և անկողմնակալություն**

Կազմակերպությունում բացառվում են ազգային, ռասայական, կրոնական, սոցիալական, գենդերային, քաղաքական կողմնորոշման կամ ցանկացած այլ տեսակի պատկանելության նկատմամբ խտրականության և կողմնակալության դրսևորումները: Կազմակերպությունն առաջնորդվում է իր որդեգրած արժեքներով, համոզմունքներով և անկողմնակալ է մարդկային ու մասնագիտական հարաբերություններում:

ՀՖՄ գործունեության սկզբունքներն են՝

- Օրենքի գերակայություն և օրինականություն
- Օբյեկտիվություն և անաչառություն
- Գործընկերություն և համագործակցություն
- Ռազմավարական պլանավորում և կառավարում
- Մասնագիտական արհեստավարժություն և որակ
- Հաշվետվողականություն, թափանցիկություն և հրապարակայնություն
- Բարեխղճություն և հետևողականություն
- Մասնակցային կառավարում, կոլեգիալ ղեկավարում:

2.3. ՀՖՄ ռազմավարական նպատակները

ՀՖՄ ռազմավարական նպատակները խմբավորվել են հետևյալ երկու խմբերում՝

1) **Կազմակերպության գործունեությանն առնչվող՝ տեղական**

ինքնակառավարման համակարգի զարգացմանը վերաբերող նպատակներ.

- ✓ Տեղական ինքնակառավարման բնագավառում ունենալ ՀՀ Սահմանադրության, Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի պահանջներին համապատասխանող, ամբողջական և լիարժեք գործող օրենսդրական դաշտ,
- ✓ Աջակցել ՀՀ իշխանության ապակենտրոնացման և տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման ռազմավարական մոտեցումների ձևավորմանը, քաղաքականությունների սահմանման և բարեփոխումների իրականացման հստակ և հիմնավորված ճանապարհային քարտեզի կազմմանը և օգտագործմանը,

- ✓ Մասնակցել տեղական ինքնակառավարման համակարգում կառավարման ժամանակակից մեթոդների, կառուցակարգերի և մոտեցումների կիրառմանը, մեթոդաբանական գործիքների ստեղծմանը, կատարելագործմանը և օգտագործմանը, միջազգային և տեղական առաջավոր փորձի ներդրմանը ՀՀ համայնքներում,
- ✓ Աջակցել ՏԻՄ-երին՝ կանոնակարգելու և կազմակերպելու տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության գործընթացները,
- ✓ Օժանդակել ՏԻՄ-երի և համայնքների աշխատակազմերի աշխատակիցների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը՝ նպաստելով ՏԻՄ-երի գործունեության արդյունավետության, թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության բարելավմանը,
- ✓ Նպաստել տեղական ինքնակառավարման հարցերով հետաքրքրվող անձանց մասնագիտական որակավորման բարձրացմանը և նոր սերնդի մասնագետների ձևավորմանը,
- ✓ Մասնակցել համայնքների օրինական շահերի պաշտպանության գործընթացներին,
- ✓ Նպաստել տեղական ինքնակառավարման բնագավառում գործող քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի սուբյեկտների գործընկերության և համագործակցության զարգացմանը:

2) Կազմակերպության ներքին կանոնակարգային նպատակներ.

- ✓ Վարչական կառավարման արդիականացում և կանոնակարգում,
- ✓ Կադրային քաղաքականության հստակեցում, աշխատակազմի աշխատակիցների և կամավորների ներգրավման կանոնակարգում,
- ✓ Ֆինանսական կառավարման համակարգերի արդիականացում, ծրագրային ապահովում,
- ✓ Ինստիտուցիոնալ կարողությունների աստիճանական զարգացում,
- ✓ Ֆինանսական հոսքերի կայունացում, ֆինանսական անկախության բարձրացում:

III. ՀՖՄ գործունեության հիմնական ուղղությունները

3.1. ՀՖՄ մասնագիտական գործունեություն տեղական ինքնակառավարման բնագավառում

Մասնակցություն ՀՀ օրենսդրության մշակմանը և քննարկմանը

- ՀՀ օրենսդրական ակտերի նախագծերի մշակում, քննարկում և ներկայացում պետական լիազորված մարմիններին:
- ՀՀ գործող օրենսդրական ակտերում փոփոխությունների և լրացումների նախաձեռնում՝ համապատասխանեցնելով դրանք ՀՀ Սահմանադրության և Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի պահանջներին:

Պետական կառավարման մարմինների հետ համագործակցություն

- Պետական կառավարման մարմինների կողմից նախաձեռնվող օրենսդրական և ենթօրենսդրական ակտերի նախագծերի ուսումնասիրություն, քննարկում, փորձագիտական կարծիքի և/կամ կազմակերպության դիրքորոշման ներկայացում:
- Տեղական ինքնակառավարման բնագավառում պետական կառավարման մարմինների կողմից մշակված քաղաքականությունների առաջնահերթությունների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում, ակտիվ մասնակցություն բնագավառի զարգացման ռազմավարությունների, հայեցակարգերի և այլ ռազմավարական փաստաթղթերի մշակմանը և քննարկմանը:
- ՀՀ տեղական ինքնակառավարման բարեփոխումների մշտադիտարկում, գնահատում, հիմնախնդիրների վերհանում և առաջարկությունների ներկայացում պետական կառավարման մարմիններին:

Համայնքների հետ տարվող աշխատանք

- ՏԻՄ-երի և համայնքների աշխատակազմերի աշխատակիցների կարողությունների ձևավորում և զարգացում՝ համայնքի զարգացման քառամյա ծրագրերի և բյուջեների կազմման, գործառնական և կապիտալ պլանավորման և բյուջետավարման, ծրագրային հայտ-առաջարկների մշակման և դոնոր կազմակերպություններին ներկայացման, ֆինանսական կառավարման համակարգերի և մոտեցումների արդիականացման, տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության, համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործարկման, հանրային քննարկումների կամ լսումների կազմակերպման և անցկացման, միջհամայնքային համագործակցության և բազմաթիվ այլ բնագավառներում:
- Համայնքների միջև գործուն կապերի ստեղծում և զարգացում՝ նպաստելով նրանց գործընկերության և համագործակցության զարգացմանը, համատեղ խնդիրների լուծմանը, տեղեկատվության ու լավագույն փորձի փոխանակմանը:

Խորհրդատվական և հետազոտական գործունեություն

- Տեղական ինքնակառավարման բնագավառում միջազգային փորձի, կառավարման առաջավոր մոտեցումների և մեթոդների ուսումնասիրություն, դրանց տեղայնացման հնարավորությունների դիտարկում, թեմատիկ հետազոտությունների և ուսումնասիրությունների իրականացում:
- Տեղական ինքնակառավարման բնագավառին առնչվող մեթոդաբանական փաստաթղթերի մշակում և դրանց պրակտիկ իրագործումը երաշխավորող խորհրդատվական և փորձագիտական գործունեության ծավալում:
- Մասնագիտական ձեռնարկների, ուղեցույցների և հետազոտական այլ հրապարակումների մշակում, հրատարակում և տարածում ՀՀ համայնքներում և այլ շահագրգիռ կողմերին:
- Մասնագիտական խորհրդատվության տրամադրում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, միջազգային, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների ներկայացուցիչներին, ուսանողներին և այլ շահագրգիռ անձանց:

Հանրային կապերի ստեղծում և ամրապնդում

- Տեղական ինքնակառավարման համակարգի վերաբերյալ արդիական տեղեկատվություն պարունակող և բնագավառի վերջին զարգացումները ներկայացնող <Համայնք> պաշտոնաթերթի պատրաստում, հրատարակում և անվճար տարածում:
- Կազմակերպության պաշտոնական համացանցային կայքի կատարելագործում, պարբերական թարմացում և զարգացում:
- Համացանցային սոցիալական ցանցերում կազմակերպության ընդգրկվածության ընդլայնում և ակտիվացում:

Շահերի պաշտպանություն

- Համայնքների և նրանց աշխատակազմերի աշխատակիցների օրինական շահերի պաշտպանություն՝ հանդես գալով որպես միջնորդ և/կամ խորհրդատու տարբեր պետական, համայնքային և այլ կառույցների հետ հարաբերություններում:
- Մասնակցություն քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ջանքերի միավորմանը և համատեղմանը՝ ի նպաստ համայնքների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության:

Ոսուցողական ծրագրերի իրականացում

- Տեղական ինքնակառավարման բնագավառի ուսուցման նյութերի մշակում և հրապարակում:
- Տեղական ինքնակառավարման բնագավառի թեմատիկ դասընթացների, սեմինարների, կլոր-սեղանների և քննարկումների կազմակերպում և անցկացում տարբեր լսարանների ունկնդիրների համար (պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին,

քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի և այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ, ՀՖՄ անդամներ, ուսանողներ և այլն):

- Կազմակերպության ուսուցման կենտրոնի ստեղծում և գործարկում:

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ համագործակցության զարգացում

- Եվրամիության Արևելյան գործընկերության ծրագրի շրջանակներում Հայաստանի ազգային պլատֆորմի անդամ կազմակերպությունների հետ գործընկերության և համագործակցության խորացում և զարգացում:
- Տեղական ինքնակառավարման բնագավառում գործող հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների և այլ կառույցների հետ համագործակցության զարգացում, համատեղ ծրագրերի ու միջոցառումների նախաձեռնում և իրականացում:

3.2. ՀՖՄ ներքին կանոնակարգային գործունեության ուղղությունները

Վարչական կառավարում

- Կազմակերպական կառուցվածքի վերանայում և արդիականացում, կառուցվածքային միավորների գործառույթների հստակեցում և վերասահմանում:
- Կազմակերպության գործունեության վերակազմակերպում՝ սահմանված աշխատակարգերին և ընթացակարգերին համապատասխան:
- Կազմակերպության վարչության և վերստուգիչ հանձնաժողովի նիստերի անցկացման պարբերականության ապահովում, վարչության մշտական հանձնաժողովների գործունեության ակտիվացում և դերի բարձրացում:
- Կազմակերպության ներքին փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային կառավարման միջոցների օգտագործում, համակարգչային ներքին ցանցի ներդրում և կիրառում:
- Կազմակերպության վարչական կառավարման արդյունավետության մակարդակի աստիճանական բարձրացում:

Կադրային քաղաքականության իրականացում

- Կազմակերպության աշխատակազմի համալրում որակյալ փորձագետներով ու մասնագետներով և շարունակական զարգացում՝ աշխատակարգերով և ընթացակարգերով սահմանվող կադրային քաղաքականությանը համապատասխան:
- Կազմակերպության կողմից իրականացվող ծրագրերում կարճաժամկետ փորձագետների ու մասնագետների ներգրավում՝ առաջնահերթություն տալով կազմակերպության անդամների պոտենցիալին:
- Տեղական ինքնակառավարման բնագավառի փորձագետների ու մասնագետների ինքնակենսագրական տվյալների պարբերական հավաքագրում և բազայի վարում:

- Կազմակերպության աշխատանքներում կամավորների և ուսանողների ներգրավման գործընթացի կանոնակարգում՝ նրանցից ընտրելով հեռանկարային մասնագետներին կազմակերպության գործունեությանը մասնակից դարձնելու նպատակով:

Կազմակերպության անդամների հետ տարվող աշխատանք

- Կազմակերպության անդամների մասնագիտական կարողությունների պարբերական զարգացում՝ ձևավորելով աշխատակազմի կադրերի համալրման և կարճաժամկետ մասնագետների ներգրավման ռեզերվ:
- Կազմակերպության անդամների հետ տարվող աշխատանքների անընդհատության ապահովում, նրանց ակտիվացում և ներգրավում կազմակերպության աշխատանքներում, նոր անդամների ներգրավում:

Ֆինանսական կառավարում

- Ֆինանսական կառավարման համակարգերի արդիականացում, ծրագրային ապահովում և մշտական օգտագործում:
- Հաշվապահական հաշվառման, գնումների, գույքի կառավարման և ֆինանսական կառավարման այլ գործընթացների նպատակային կազմակերպում և հստակ իրականացում՝ կազմակերպության աշխատակարգերով և ընթացակարգերով սահմանված քաղաքականություններին համապատասխան:
- ՀՖՄ անդամավճարների կանոնավոր հավաքագրման աշխատանքների կազմակերպում և հետևողական իրականացում:
- Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների հետ գործընկերային և համագործակցային հարաբերությունների զարգացում՝ հնարավորինս մասնակից լինելով նրանց կողմից իրականացվող ծրագրերի պլանավորմանը և իրականացմանը:
- Մասնակցություն պետական նպատակային ծրագրերի մշակմանը և իրականացմանը:
- Համագործակցություն տեղական և տարածքային կառավարման բնագավառում այլ երկրներում գործող ոչ կառավարական կազմակերպությունների հետ, մասնակցություն համատեղ ծրագրերի մշակմանը և իրականացմանը:
- <Հասարակական կազմակերպությունների մասին> ՀՀ նոր օրենքի ընդունումից հետո կազմակերպության շահույթ հետապնդող ենթակառույցների ձևավորում՝ ստեղծելով վճարովի ծառայությունների մատուցման հնարավորություններ (հետազոտական, վերլուծական աշխատանքներ, խորհրդատվություն, դասընթացներ, սեմինարներ, հրատարակություններ, համակարգչային ծրագրեր և այլն):
- Հայաստանում և արտերկրում վճարովի ծառայությունների և ապրանքների իրացման կանոնակարգում և նպատակային գործունեության ապահովում:

IV. Ռազմավարական ծրագրի մշտադիտարկում, գնահատում և վերանայում

ՀՖՄ 2015-2020թթ. ռազմավարական ծրագրի իրականացման մշտադիտարկումը և գնահատումը միտված են՝ կազմակերպության գործունեությունն ուղղորդելու շրջակա միջավայրի ուսումնասիրությամբ ու վերլուծությամբ բացահայտված հիմնախնդիրների հաղթահարմանը և ծրագրով սահմանված ռազմավարական նպատակների իրագործմանը:

ՀՖՄ 2015-2020թթ. ռազմավարական ծրագրի մշտադիտարկումը և գնահատումը նախատեսվում է իրականացնել, կազմակերպության նախագահի ներկայացմամբ, կազմակերպության վարչության կողմից ստեղծված՝ «ՀՖՄ 2015-2020թթ. ռազմավարական ծրագրի մշտադիտարկման և գնահատման հանձնաժողովի» կողմից: Հանձնաժողովը, յուրաքանչյուր տարվա ավարտից հետո, առաջին եռամսյակում, կուսումնասիրի և կվերլուծի կազմակերպության տարեկան գործունեությամբ ձեռք բերված արդյունքները՝ գնահատելով դրանց համապատասխանությունը ռազմավարական ծրագրով սահմանված նպատակներին և գործունեության հիմնական ուղղություններին: Հանձնաժողովը ռազմավարական ծրագրի տարեկան մշտադիտարկման և գնահատման արդյունքները ներկայացնում է կազմակերպության վարչության քննարկմանը և հաստատմանը:

Կազմակերպության շրջակա միջավայրի արտաքին և ներքին գործոններով պայմանավորված՝ տեղի ունեցած փոփոխություններին արձագանքելու և դրանք ռազմավարական ծրագրում արտացոլելու նպատակով, կազմակերպության վարչությունը կարող է որոշում կայացնել՝ վերանայելու (փոփոխություններ և լրացումներ կատարելու) ռազմավարական ծրագիրը: